

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

() տարաբաղադրակի գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(հացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղամայ յիշեցինք:—Ներքին տեսութիւնը, Գիւղատնտեսական նկատողութիւնները: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրերը: Արտաքին տեսութիւնը: Գլխադասոյն ձառը: Կարճ Սյաղիօսկի: Լեւոն XIII-ի քաղաքականութիւնը:—Մշակիչ հեռագիրները:—Յայտարարութիւնները:

ԱՎԱՄԱՅ ՅԻՇԵՑԻՆԲ

Կարդալով նորերումս լրագիրներումս որ մի վրացի երիտասարդ, պ. Գեորգի Նէրեւտէի կարդալու է առաջին անգամ հրապարակական դասախօսութիւն վրացերէն լեզուով, ակամայ յիշեցինք, որ այդ մեծ պատին մի ամբողջ խումբ ուսումնական հայ երիտասարդների խոստացած էին այլ և այլ առարկաներից ատենաբանել Թիֆլիսի գործակատարների ժողովարանի մէջ: Պարոնները իրանց այդ գովելի գիտաւորութեան մասին յայտնել էին մինչև անգամ ամենափառաւոր կերպով լրագիրներում:

Բայց մեծ պատը անցնում է, — և պարոնները դեռ չեն սկսում իրանց գործը:

Այդ տեսակ հարցեր խաղալի չեն, որ կարելի լինէր ձեռն համար խոստանալ և չը կատարել. պէտք է աւելի ծանր կերպով վերաբերվել դէպի այնպիսի նշանաւոր գործ, ինչպէս մեր մայրենի լեզուով հրապարակական դասախօսութիւնների կարդալը:

Պէտք է վերջապէս լուրջ կերպով նայել խնդրի վրա... Ժամանակ է արդէն հաստատ հիմքերի վրա կազմակերպել հրապարակական դասախօսութիւնների մի շարք, որ կարողանար աւանդել ամբոխին գիտութիւնը ժողովրդական ձևով, այդ ամբոխին հասկանալի լեզուով...

Ղշմարիտ է այդ տեսակ դասախօսութիւնները երբեք չեն կարող խիստ գիտնական բովանդակութիւն ունենալ. դորա համար հարկաւոր են աւելի մեծ ոյժեր: Բայց այն էլ մեծ քայլ արած կը լինենք, եթէ կարողանանք ժողովրդացնել գիտութիւնը, կարողանանք գիտութեան ընդհանուր հիմունքները աւանդել հայոց հա-

սարակութեան այն դասակարգերի մեծամասնութեանը, որ բացի հայերէնից ուրիշ լեզու չը գիտէ, որ ոչինչ չէ կարդում և ծխական դպրոցներում ուսումը ստանալուց, կամ գիմնազիայի ըստորին դասարաններից դուրս դալուց յետոյ իր կեանքի մնացած ընթացքում այլ ևս չէ ենթարկվում ոչ մի կրթողական ազդեցութեան:

Ի հարկէ մեր լեկտորների վրա մենք չենք նայում, որպէս համալսարանի պրոֆէսորների վրա: Բայց նրանք այնուամենայնիւ մեծ գործ արած կը լինեն, եթէ յանձն առնեն նշանակված ժամանակներում կանոնաւոր կերպով դասախօսել իրանց մայրենի լեզուով:

Գորանով, մի կողմից, մենք կրթողական ազդեցութիւն կուսնենանք ամեն տեսակ կրթողական ազդեցութիւնից զուրկ մնացող մեր հասարակութեան մեծամասնութեան վրա, իսկ ուրիշ կողմից կապացուցանենք որ հայոց լեզուն, այն լեզուն, որով թարգմանված են եւրօպական գրականութեան ամենանշանաւոր գրուածները, որ ընդունակ է արտայայտել ամենաբարձր վերացական մտքեր, որ յարմարվում է իր ձևերի հարստութեամբ բարձրագոյն ուսման ընթացքին, որ ունի այնպիսի ապաստանարաններ, ինչպէս Վէնեցիայի և Վիեննայի ակադէմիաները, որին մեր տէրութիւնն էլ ընդունակ ճանաչեց բարձրագոյն ուսման օրդան լինելու, վաւերացնելով Լշմիաճնի ձեւմարանի ուսման պրօգրամը բարձրագոյն դպրոցների ուսման պրօգրամներին համեմատ, — որ այդ լեզուն, ասում ենք, ընդունակ է, ուրեմն և ժողովրդական ձևով աւանդել գիտութիւնը:

Եւ երբ որ մայրենի լեզուով կարդացվող հրապարակական դասախօսութիւնների գործը հաստատ հիմք և տեղողութիւն կը ստանայ, երբ որ նա կը դառնայ կատարված իրողութիւն և այդպիսով հաստատ գետին կը պատրաստի մեզանից աւելի ընդունակներին և աւելի գիտնականներին:

Ինն բարձր գիտութիւնը ամբողջից աւանդելու, — գուցէ այն ժամանակ չեն գտնվի այնպիսի յիմարներ, որոնք համարձակվէին ծաղրել և խեղադար համարել այն մարդիկներին, որոնք շատ բնական, հնարաւոր և օգտաւէտ են համարում իրանց մայրենի լեզուով գիտութեան աւանդելու միտքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՏՈՂԱԹԻՒՆՆԵՐ

Ահա վերջացաւ մարտ ամիսը, գալիս է ապրիլը և արտաքին յիշատակներ ծնեցնելով իւրաքանչիւր հողատէր գիւղացու մտքում. այդ, այդ ամսումն է որ սկսում է երկալ մորեկը, որ իր աւերիչ ազդեցութիւնը ցոյց տուաւ անցեալ 1879 թուականում և ահա սպառնում է և ներկայ արաւոյս համար:

Մորեկը անցեալ թուականին աւերելով էլ լիսաւետապօլի և Թիֆլիսի նահանգների շատ կողմերի արտերը, թողել է իր սերմերը նոյն տեղերում, որոնցից սպասելի է որ և այս տարի դուրս կը գայ և մեր երկիրը կաւերի նոր մորեկ, գուցէ աւելի մեծ բանակութեամբ և աւելի սաստկաբար:

Մեզ յայտնի է, որ շնորհիւ Նիսաւետապօլի նախկին նահանգապետ Չավչավադզիի նոյն նահանգում մարդիկ են ընտրված, որոնց պարտաւորութիւնն է ամենայն ուշադրութեամբ հսկել մորեկի երեւոյուն և առաջին նշանները յայտնվելուն պէս սկսեն նրանց կտորել տալ: Կարծեմ այդ տեսակ կարգադրութիւններ արած են և Թիֆլիսի նահանգի համար. երևանի նահանգի վրա էլ արդեօք ուշադրութիւն դարձնող կայ թէ ոչ, այդ մեզ յայտնի չէ *): Բայց խօսքս այստեղ վարչութեան անձանց վրա չէ, որոնք առանց հասարակութիւնների անմիջական օգնութեան մեծ օգուտ չեն կարող հասցնել, որպիսի է իրանք նուիրված լինեն այդ բանին: Սրա համար հարկաւոր է, որ շինական ժողովուրդները իրանք հոգային այդ մասին, առանց սպասելու կառավարութեան պահանջմունքներին:

Մի երկու խօսքով նկարագրենք մորեկի կեանքը, որի ինչ և ինչ ձևի լինելը բոլոր ներխ լաւ յայտնի է: Մորեկը դուրս է գալիս վաղ գարնան, ապրիլի սկզբից սկսած մինչ մայիսի վերջը (կլիմայի բարեխառնութեան նայած), անցեալ աշունքից գետնի մէջ ածած սերմերից: Այդ սերմերը մի տեսակ թաղանթապատ ծրարների մէջ են լինում և զետեղված են լինում բաւական խորու-

*) Թէև անցեալ թուին Երևանի նահանգում մորեկը չէ երևացած, բայց և այնպէս գուցէ սահմանների վրա մորեկը սերմ թողած լինի, կամ այս գարնան այնտեղ գուցէ տեղափոխվի յիշեալ նահանգներից:

Թեամբ հողի մէջ, որոնց պատճառաւ ամենաստիկ ցուրտը ևս չէ կարող նորանց աղղել: Մի ծրարի մէջ լինում են 30 մինչ 100 սերմ: Սերմից մորեկի դուրս գալուց մինչ թեւաւորվելը տևում է մօտ 6 շաբաթ, այդ միջոցում նա մի քանի անգամ փոխում է իր մորթը, իր սկզբնական սև գոյնից հետո հետո աւելի պարզ գոյն ստանալով: Թեւաւորվելուց քիչ ժամանակ յետոյ մորեկները զուգաւորվում են և այնուհետև կըր ածում է իր սերմերը իր յետեի ոտներով գետնում փորած փոսի մէջ. սերմերը ածելուց յետոյ կըր մի անակ լարծուն հեղանիւթ է թափում նորանց վրա, որը հողի հետ խառնվելով ամուր շրջապատում է սերմերին, կիսատ մնացած փոսը մորեկը լցնում է հողով: Դրանից մի առ ժամանակ յետոյ վերջանում է մորեկի կեանքը:

Մորեկը սերմ ածելու համար ընտրում է չոր տեղեր. կաւախաւը գետինը նախապատիւ է համարում, բան աւաղախաւը գետինը, աւելի յաճախ սերմը թողնում է հացի արտերի շաքերում հանգիստ թողած արտերի վրա:

Սերմից դուրս եկած մորեկը սկզբում կըրծում է բոյսերի ամենաքնքշէլ մասերը, բայց զինվելով հետզհետէ աւելի ամուր գործիքով յարձակվում է և ամուր բունների վրա և կրծում է արդէն ծաղկած հասկի մօտից: Մորեկը ուտելու համար նախապատիւ է համարում մշտաւոր եղիկաւորները և կորեկը, բայց միւս հացաբոյսերն էլ նորա սիրելի կերակուրն են կազմում, առւոյտը (եծն ջէն), կռնկանը և ուրիշ այդ տեսակ բոյսեր սիրով չէ ուտում, ձեռ չէ տալիս սեխը, վարունքը, դդումը և այլն: Վերակրի պակասութեան ժամանակ յարձակվում է ագարակների և սյգիների վրա, անապատներում—անտառային բոյսերի վրա էլ: Սաստիկ քաղցածութեան պատճառով վիպցնում է ամենայն տեսակ բուսական և մինչև անգամ կենդանական նիւթեր, ամենաստիկ կարիքում նոքա յարձակվում են և միմեանց վրա: Մորեկի հասուցած ահագին մնասի մասին հարկաւորութիւն չը կայ յիշելու, այդ բանը իւրաքանչիւր գիւղացու շատ լաւ յայտնի է...

Տեսնենք այժմ ինչ միջոցներ են գործ դրելով մորեկի դէմ մաքաւելու համար: Այդ միջոցները երեք կարգի են բաժանվում, համաձայն մորեկի երեք տեսակ կերպարանափոխութեան. առաջինն է մորեկների փչացնելը դեռ սերմի ժամանակ, երկրորդը—սերմից նոր դուրս եկած ժամանակ և երրորդը—արդէն թեւաւորվելուց յետոյ:

Մինչև այժմ եղած փորձերից ապացուցվել է, որ այս վերջին եղանակը համարեալ թէ անօգուտ է, որովհետև այդ ժամանակ մորեկը արդէն մեծ տարածութիւն է բռնած լինում և որպիսի էլ աշխատութիւն գործ դնելու լինի, անու ամենայնիւ նորա մեծագոյն մասը ցրուելով, ուրիշ տեղեր պիտի տարածի, ուր գուցէ չը յայտնվելու ևս լինէր, եթէ ազատ մնար իր սկզբի բռնած ընթացքում:

Մորեկի սերմերը փչացնելը շատ տեղերքում և մի բանի հանգամանքներում բաւական ապահով միջոց է մորեկի դէմ մաքաւելու համար, բայց գուցէ այդ կերպը փոքր ինչ խորթ երեւայ մեր գիւղացիներին, որոնք սովոր չեն բանի վրա այդ աստիճան հեռա-

տեսութեամբ նայել: *) Այդ միջոցը պէտք է գործ դնել աշուճելու և մինչև վերջնական սկիզբները, մինչև մարեկան գետնի երեսը յայտնվելը: Իսկ համար պէտք է որոշել մարեկան սերմածած տեղերը և գետնին շրջելով (հերկելով) հաւաքել սերմի ծրարները և փչացնել նրանց: Սերմի ծրարներ որոնելու համար մարդուն կարող են օգնել և խոզերը ու այլ ընտանի կենդանիները (թռչուններ):

Սորիկի դէմ մարառելու համար ամենահաստատ միջոցն է նորանց կոտորելը զեռահատակ ժամանակում, այն է թեւաօրով լուց առաջ: Իսկ համար զանազան կերպեր են գործ դնվում, այստեղ կը յիշենք միայն ամենադիւրինները: Վաղ դարնան պէտք է խիստ ուշադրութեամբ վերահսկողութիւն անել անցեալ տարում մորեկ եղած տեղերի վրա, մանաւանդ այն տեղերի վրա, ուր յայտնի է որ մորեկը սերմ է թողել: Հէնց որ նկատվի սերմերից մորեկի դուրս գալը, հարկաւոր է անմիջապէս հարկաւոր քանակութեամբ մարդիկ դուրս գան դաշտը և դուրս եկածը կոտորեն հէնց նորանց բոյնների մօտ: Իրանից յետոյ, երբ արդէն մորեկը տարածված լինի, հարկաւոր է երկար փոսեր և առուներ փորել դաշտի վրա և չտեսնելով ու աւելնելով մորեկը այդ փոսերի մէջ ընել ու հաստ փայտերով լուծ ջարդել և ապա փոսերը լցնել խոզով: Ինչերով մորեկները հաւաքվում են կոյտ կոյտ թփերի տակ, վաղ առաւօտեան հեշտ կարելի է նորանց ջարդել այն կոյտերում, դրա համար օգտակար ևս է երեկոյեան արտերի վերա տեղ-տեղ յարդ կամ ցախ թողնել և զիջելով մորեկները նորանց վրա հաւաքվելուց առաւօտեան կրակ տալ, ի հարկէ չորս կողմից պահելով որպէս զի նոքա չը հեռանան: Վատ չէ եթէ յարդի վերա հէնց փորել էլ նաւթածովի: Մի և նոյն միջոցում հարկաւոր է և ընտանի կոտորել ու այլ կենդանիներ ու հաւեր դաշտը դուրս բերել, այլ և հովանաւորել դաշտային թռչուններին:

Ահա այս միջոցների գործադրութեան մասին պիտի հոգայ այժմ ամենայն մի շինական հասարակութիւն, եթէ չէ ուզում որ անցեալ տարվայ պէս այս տարի էլ իր բերքը մորեկներ զոհվի և ինքը զուրկ ծռած մնայ իր տարեկան ապրուստից զուրկ: Այստեղ չեմ կատարում չը յիշել որ շատ անգամ զիւղացու սնտոխապաշտութիւնն է արգելել լինում եթէ նա չէ կարողանում պարս ու պատշաճ կերպով դիմադրել վտանգին: Նա ամենայն մի պատահար Աստուծոյ բարկութեանն է վերաբերում և կուրօքն գլուխը ծռած լռիկ հանդիսատես է ձևանում այն պատահարներին չաշխատելով պահպանել իր քրտինքով հասցրած բերքերը: Ինչպիսի քահանաների և ուսուցիչների պարտաւորութիւնն է հանել ժողովրդին այդ նախապաշարմունքներից և ժամանակին յորդորել նրանց գործի կանխել, իրանց դառն աշխատութիւնը խնայելով:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԱԼԵԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

15 մարտի

Ազգային պարբերական թերթերում կարգաւոր մեր վանայ համազգայնաց թշուառ դրութեան ենթարկվելու մեզ անհրաժեշտ պարտք համարեցինք մասամբ և եթ օգնութեան ձեռն կարկառել նրանց, յուսաւով, որ մեր այս ջնջին նուէրն, այրի կնով լուծալի նման ընդունելութեան կարծանանայ, ուստի անցեալ բարեկենդանի հինգշաբթի օր, երբ տեղւոյս եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարվում էր վարդանանց քան նահատակների տարեդարձը, որին, ի թիւս այլոց, հան-

*) Ինչպէս լսեցինք Լիւսաւէտապոլսում գործադնվում է այդ եղանակը և արդէն հաւաքած են 30 պղպաղի սերմ, այդ մի գեղեցիկ բացառութիւն է, որ կարելի է վերաբերել միայն հաւաքած սերմի համար խոստացված վարձին:

դիսատես էինք և մենք, կազմելով ստորագրութիւն հրատարակելու մի քանիսին մեր քաղաքացիներից, որոնք մեզ ծանօթ էին, որոնք ուրախութեամբ սերմի յարգելով մեր առաջարկութիւնն իրանց կարեաց չափով ստորագրեցին և որոնցից նուիրածի գումարը եղաւ վաթսուսուս րուբլի և եօթանասուսուս և հինգ օկ 4 օկ 4 (60 ր. և 75 օկ 4 օկ 4), այս գումարից հանելով փոստայի ծախս 75 կօպէկ մնացած վաթսուսուս րուբլին, նուիրատուների ցուցակի հետ, ուղարկելով քարեղան խմբագրութեանն խնամարար խնդրում ենք հասցանել մեր վերոյիշեալ թշուառավիճակ համազգայններին, որի միջոցաւ հարկն է իսկ նուիրատուների անունները բարեհաճեցէք տպագրել ձեր լրագրի մի անիւնում:

Վանայ սովետոց համար նուիրատուների ցուցակը:

Մարտիրոս և Եղեկ եղբայրներ Գրիգորեան 4 ր., Աղէքսանդր Խաչատրեան 4 ր., Պողոս Կիրակոսեան 2 ր., Պողոս Սիմեոնեան 1 ր., Գալովը Գեօսապապեանց 3 ր., Գովսէփ Պողոսեան 1 ր., Միքայէլ Թառայեանց 1 ր., Աղաբէկ Թօփչեանց 1 ր., Պողոս Աստանեանց 1 ր., Մովսէս Սարգսեան 1 ր., Ստեփան Պողոսեան 1 ր., Մանուկ Կարապետեան 1 ր., Գովհանէս Թառայեանց 2 ր., Մելքոն Գարութիւնեան 50 ր., Խաչատուր Աբրահամեան 1 ր., Գովհանէս Արզաբեանց 50 ր., Սիմեոն Սարգսեան 20 ր., Աղաբէկ Կարապետեան 20 ր., Խաչատուր Գովհանէսեան 20 ր., Խաչատուր Դաւթեան 29 ր., Միքայէլ Գեօսապեանց 1 ր., Մկրտիչ Աստանեան 30 ր., Գարութիւն Դաւիթեանց 1 ր., Ռուբէն Զաւաթեանց 1 ր., Գրիգոր Դաւթեանց 2 ր., Առաքէլ Մուսիկեանց 1 ր., Արտաշէս Տէր-Գալովեան 3 ր., Գալովը Մատիսեանց 2 ր., Թադէոս Գալովեան 20 ր., Գովհանէս Ամիրջանեանց 1 ր., Աւետիս Կարապետեան 1 ր., Գովհանէս Պարոնեանց 50 ր., Սրշակ Աստանեանց 1 ր., Ստեփան Զօլախեանց 40 ր., Արշակ Աստանեանց 20 ր., Նիկօլայ Աղաբեան 1 ր., Մկրտիչ Սիմեոնեան 1 ր., Հայ ոմն 1 ր., Վերթմէս Գառնայ Տէր-Գեօրգեանց 1 ր., Գովհանէս Զօրոգեանց 2 ր., Եփրատեան Վասիլով (յոյն) 1 ր., Աղաբէկ հայ ոմն 5 ր., Գեօրգ Միսեոնեան 3 ր., Հայագործ Դաւիթ 3 ր., Գրիգոր Գովսէփեան 15 ր., Կարապետ Գովհանէսեան 20 ր., Մկրտիչ Մարաբեանց 1 ր.: Գումարն է 60 ր.:

Մարտիրոս Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, 24 մարտի

Հանաչելով թերթահայերին, ՎՇԱԿԸ վաղուց արդէն թերահաւատութեամբ էր վերաբերվում նոյա մէջ գործողների ընդունակութեան: Սովի այժմեան սպառնալիքը և Հայաստանի տագնապը արդարացրին կրկին ևս մի անգամ մեր լրագրի մշտական կատակածները. գրեթէ երեք ամսվայ ընթացքում, քանի մասը և սարսափը տիրապետում է Հայաստանի մէջ, ոչինչ կատարեալ և կանոնաւոր տեղեկութիւններ չենք կարողանում ստանալ այնտեղից, մինչդեռ վառ, էրզրում և միւս տեղեր գտնվում է մի ամբողջ լեզէ՛՛ն վայրահալ մը ընտոնների, որոնք ուրիշ ժամանակ լրագրիների զանաւ են տանում իրանց հետապնդանալու դարդաւարանութիւններով: Այժմ այդ միտտոյ հոսոսները կարծես բոլորն էլ սովից կոտորվել են, ոչինչ չեն գրում մեզ և ոչ մի լրագրին, մինչև այն ժամանակ, երբ այստեղից այնտեղից լսելով մի կերպ կարողանում ենք իմանալ որ վանայ մէջ կազմված կոմիտէն ոչ միայն շատ քիչ է հոգ տանում գիւղական ազգաբնակչութեան վիճակի վրա, այլ ևս հոգ չէ տանում ընտրել իրան գործակից գոնէ մի ընդունակ և ժրջան մարդ, ինչպէս գործընթակ պ. Մկրտիչ փորթուգալեանն է: Երկնքը ինչպէս չի կարող փոխվել, տաճկահայերն էլ անուղղել են, նոքա միշտ թող են, միշտ տարտամ, միշտ դարձապարան: Եւ նոյա անշնորհութեան ենք պարտական անշուշտ այն բոլորից իրողութեանը, որ հաղորդւում է ինձ այսօր կամ սարականը վանից գրած իր մասնաւոր նամակում, նա ասում է որ գիւղական ազգաբնակչութիւնը մնալով անուշադիր սաստիկ կոտորվում է, այնպէս որ Երզրում և Բաշկալայ գաւառները գրեթէ բոլորովին ջնջվել են: Նամակը գրած է փետրվարի վերջերս, ուրեմն որչափ դժբախտութիւններ է պատահել այն ժամանակից յետ, մենք դեռ այդ չը գիտենք: Վառն որոյ տեսնելով տաճկահայերի այդպիսի տարտամութիւնը, ՎՇԱԿԻ խմբագրութիւնը այլ ևս չը պիտի յապաղէ. մինչև պ. Ամիրջանեանի արած բոլոր առաջարկութիւնների իրա-

գործվել թող շտապէ խմբագրութիւնը անմիջական հեռագրի յարաբերութիւն սկսել վանի մէջ գործող կոմիտէի հետ, ընտրելով իրան ներկայացուցիչ այնտեղ պ. Մկրտիչ փորթուգալեանին և տալով կոմիտէին իր պարբերական հրահանգները: Որովհետև գործողների անգլխութիւնից հայրենիքը գրկվում է ամեն օր մի քանի տասնեակ գաւառներից, վանորոյ սրտացաւ նուիրատուները անշուշտ մեծ երախտագրութեամբ կը համաձայնեն որ ՎՇԱԿԻ խմբագրութիւնը յանձնառնէ մի այդպիսի մարդասէր հոգատարութիւն անել հեռագրական ճանապարհով, հարկաւոր ծախքը անելով նուիրատուութիւնների գումարից և արդեւ լրագրի մէջ բոլոր ստացած տեղեկութիւնները և տուած համառօտ հրահանգները: Եւ այդպէս գուցէ մի երկու հարկւր լուրի միւսելով հեռագրիները վրա, կարելի կը լինի նախ բաւականութիւն տալ ժողովրդի լարված տրամադրութեանը, որ առաջ է դալիս կատարեալ անյայտութիւնից սովամահների մասին: Երկրորդ՝ նուիրատուութեան գործին աւելի ուժգին ընթացք տալ. երրորդ՝ մի ամբողջ ազգի փրկութեան գործը չը թողնել միայն որ և ինչ մեզ անյայտ երեմիա եւ պիտկպոսի կամ մի պաշտօնական գործակաւարի յուսով...:

Վայրկեանները թանգ են. գործող չը կայ, վանորոյ ցանկալի կը լինէր որ այս խորհուրդը անտես չանէր ՎՇԱԿԻ խմբագրութիւնը:

Գ. Ե. Երկրորդեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մարտի 20-ին

Յարգելի խմբագիր, ձեր պատեւելի լրագրի էջերում կարգաւոր թղթակցութիւններ հաճախատանից, այն անտանելի դրութեան մասին, որոյ մէջ գտնվում են մեր արեւակից եղբայրները, սովից նեղացած, ևս սրբազան պարտք համարեցի բանալ հանգանակութիւն իմ ծանօթներին և բարեկամներին մէջ, որից գոյացաւ 61 րուբլի, որ և ուղարկում եմ ներկայեալ նամակիս հետ. խնդրեմ հասցնէք ուր որ հարկն է:

Ահա նուիրատուների ցուցակը: Տ. Աննա Էմիլեան 5 ր., Թ. Ֆերդինան Ավալեան 3 ր., Թ. Սրբուհի Կուրծեան 2 ր., Թ. Սրբուհի Արուսեան 2 ր., Թ. Եղիսարէի Տէր-Նիկողոսեան 1 ր., Թ. Բարբարէ Գուրգենեան 1 ր., Թ. Բալիս Ղալաբեան 1 ր., Թ. Վարդուհի Խոջաբեան 1 ր., Թ. Կատարինէ Տէր-Ստեփանեան 2 ր., Թ. Գարիկայ Սահակեան 2 ր., Թ. Վարդուհի Սանթրուսեան 1 ր., Թ. Մարիամ Մարկոսեան 1 ր., Թ. Մարիամ Արեւիկեան 1 ր., Թ. Մարիամ Մաշուսեան 1 ր., Գեօրգ Խոստամանեանց 5 ր., Դաւիթ Խալաբեան 3 ր., Գալովը Գեօրգեան 6 ր., Արտէմ Սահակեան 3 ր., Գովհանէս Սեմերեան 3 ր., Սիմեոն Պէտրոսեան 2 ր., Գեօրգ Խոջաբեանեան 1 ր., Հալովէր Զաւաթեանց 1 ր., Բաբարէ Տէր-Նիկողոսեան 1 ր., Սարգիս Գիգրեան 1 ր., Մի ոմն 1 ր., Սողոմոն Սուսանեան 3 ր., Ալեքսանդր Սուսանեան 3 ր., Թ. Աննա Սուսանեան 2 ր., Թ. Մարիամ Սուսանեան 2 ր.: Ընդամենը 61 րուբլ:

Օր. Մարիամ Սուսանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ազուլիս, 17 մարտի

Բացելով հանգանակութիւն Ազուլիսի տիկիների մէջ, ժողովելի 415 ր., որի մի մասը,—323 ր. տիկիների կողմից, իսկ 92 ր. թատրոնատէրների կողմից նուիրվում է յօգուտ վանայ սովից:

Ընդ տմի ուղարկում եմ ձեզ մի փոխանակագիր 415 ր., որ պ. Ալեքսանդր Միկիլ-Աղաբեանից ըստանալ, խնդրում ենք շուտափոյթ հասցնել ուր հարկն է:

Նուիրատուաց ցուցակը հետեալ անգամ կուղարկեմ ձեզ, խնդրելով որ անպատճառ տպէք:

Կատարինէ Տէր-Մկրտչեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք 10 ր. յօգուտ Արարատեան ընկերութեան Բագրիկ նահանգի բնակիչ պ. Գովսէփ Մատուրեանից:

ԻԳՐԻՐԻՑ հետեալ անձնք ուղարկում են մեզ

10 րուբլ յօգուտ Արարատեան ընկերութեան Ա. Կանայեանց 3 ր., Լ. Տէր-Գարութիւնեանց 1 ր., Մ. Մնացականեանց 1 ր., Ս. Սողոմոնեանց 1 ր., Փ. Դարբինեանց 1 ր., Պ. Հայրապետեան 1 ր., Ն. Լահանեան 1 ր.: Ընդամենը 10 րուբլ:

Երէկ, 27-ին մարտի կրկին ուղարկեցինք 200 րուբլ յօգուտ Թիւրքայի հայ սովից Կիւրճի կեանի առեւտրական տան ձեռքով: Վերջին անգամ փող ուղարկելուց յետոյ մնում էր խմբագրութեան մէջ 59 ր. 76 կ. Գրանից յետոյ հաւաքվեցաւ 2026 ր. 50 կ., որ միասին կանի 208 ր. 26 կ.: Այս գումարից այժմ 2000 ր. ուղարկվում, մնում է խմբագրութեան մէջ, հեռագրի ծախսը 3 ր. 25 կ. հանած՝ 83 ր. 1 կ.: Ուրեմն մինչև այժմ ուղարկել ենք յօգուտ Հայաստան սովատանջների ընդամենը 18,000 րուբլ:

Այսօր, մարտի 29-ին կը լինի ԹԻՖԼԻՍԻ Թասընում ռուսաց օպէրայի առաջին ներկայացումը: Կը տան «Տրալլիտա» օպերան:

ԳՐՈՐԻՑ ստացանք 1000 րուբլ յօգուտ վանայ սովից: Նուիրատուների ցուցակը կը տպւի ՎՇԱԿԻ հետեալ համարներից միւսում:

ՎԱՍԻԿԱՎԱՍԻ հայ քահանայ հայր Կուրճի կեանց ուղարկել է մեզ 30 րուբլ յօգուտ վանայ սովից, որ ժողովեցաւ վարկիկալիսում պ. Գարախանեանի տանը ճաշի ժամանակ: Ահա նուիրատու անձանց ցուցակը: Գովհանէս Ղարախանեանց 5 ր., Գեօրգ Գարութիւնեանց 5 ր., Գովհանէս Աբրահամեանց 5 ր., Կարապետ Բաշկալեանց 5 ր., Վարդան Տէր-Աբրահամեանց 3 ր., Գրիգոր Վարանեանց 2 ր., Ալեքսանդր Բաղդասարեանց 5 ր.: Ընդամենը 30 րուբլ:

ՓԹԻՆԻՍ բնակիչ պ. Յ. Թիւրքեան դարձեւ ուղարկել է մեզ 100 րուբլ վանի սովատանջների համար:

Պ. Բիշիկ Լեւոն Տիգրանեանց ուղարկել է մեզ 25 րուբլ, որպէս զի հասցնելը այդ գումարը վանի սովալուկներին:

Վերջապէս Ռուբինեան վարդապետի փողիքի 1000 րուբլ գործ է դրվում յօգուտ վանի սովատանջների: Այդ փողերը պ. պ. Ա. Գովհանէսեան Նիկին և Մանթաշովին էին յանձնված: Որքան մի յայտնի է, այդ պարունները դարձեալ փողեր ունէ պահած, որ Ռուբինեան վարդապետը նրանց յանձն է: Հեռագրից իմանալ, բացի այդ փողերի որքան փող է հաւաքել դարձեալ Ամբրոսիոս Ռուբինեան իր ճանապարհորդութեան մէջ Ռուսաստանում: Եւ ում համար է պահում նա այդ փողերը, աւելի լաւ չէր լինի բոլորն էլ տայ յօգուտ սովատանջների: Միթէ դերապատիւ վարդապետ կամենում է մեզ դարձեալ այն յոյսերով կերկրել, թէ հինիւրեւ է մի Ռուբինեան երկրորդ ծական (երեակալական) դպրոց էրզրում մի երկի այն պարոնը, որի ազգանունը արդէն հրատարակված էր, որպէս ապագայ տեսուչ չեղ ուսումնարանի, դեռ երկար կը սպասի, մինչև կսի իր պաշտօնի վարելը:

ԻԳՐԻՐԻ հայ հասարակութիւնը հրապարակաւ յայտնում է իր շնորհակալութիւնը դաւառապի Բագրատ Հասան-Ջալալեանցին նրա հոգատարութիւնների համար, որոնցով պարոնը աշխատաւոր Սուրմալուի վիճակի ժողովրդին ազատ հացի թանգութիւնից, թէ կառավարութիւնից լիւր բերել տալով և աղքատներին բաժանելով թէ նախապէս զգուշացնելով ժողովրդին, որ իր ձեռքում ունեցած պաշարիչները չը սպառվածաւելով կամ վատնելով: Նոյն պարոնի չեհիւ Սուրմալուի վիճակում տիրում է կատարել խաղաղութիւն. և վերջին օրերում ձեռքաւարկվել է բողբերի գլխաւոր աւաղակապետը, որ կուլի է Ալեօ-Աւաղա:

Մեզ գրում են ԲԵՂԱՐԱՐԵԱՆԻՑ, որ թիւն Արեւի գաւառապետ պ. Կիլիօճի ինքնատիւ և Նուրիսի յաշորդ արծ. Գրիգորիս վայրապետի աշխատանքով Բեղաբեանցի հայաբնակ գիւղում հաստատվել է մի հոգեւոր ծխական ուսումնարան, որի մէջ այժմ սովորում են 42 աշակերտներ:

ՎԱՍԱՐԴԱՍԻՑ մեզ գրում են, որ ժողովրդի մի քանի նենգաւոր մարդիկ սկսել են լուծութիւններ յարուցանել նոր կարգված երեք դարձածների և հացաւաճառ Եղիարեանի դէմ, որոնց յանձնված էր Էմմանի վանքից:

տացած 25 խալվար (750 պուդ) ցորենից հաց պատրաստել տալ աղքատ ժողովրդին է֊ման զե֊նով ծախելու համար: Հաղորդում են, որ միջեալ խուղարանների նպատակն է խանդարել այդ բարի գործը:

Մեզ գրում են Բէլգրադէնէն, որ Նուրիի յաջորդ արժ. Գրիգորիս վարդապետը, որ մի և նոյն ժամանակ օրնական է լինական վերադասել, աշխատում է դանադան գիւղերում նոր ուսումնային նարաններ հիմնել:

Արարչութի համալսարանի պրոֆէսոր դոկտոր Ա. Շիթեանցը խնդրում է մեզ յայտնել, որ յառաջիկայ ամառվայ մայիս ամսին մինչև օգոստոսի վերջերի մտադիր է անցկացնել Պէտրոգրադի հանքային ջրերի մօտ և այնտեղ պարապել բժշկութեան: Պարոնը սպեցիալիստ է կուրծքի, կուրդի, քթի, ականջի և սիֆիլիտական հիւանդութիւնների: Այցելու հայ հիւանդները կարող են օգուտ քաղել իրանց աղքատից բժշկապետի խորհուրդներից, որի մասին նա յայտնում է իր պատրաստականութիւնը:

ԱՍԱՅԻՍԱՅԻՍ մեզ գրում են, որ եղիշէ վ. Մեծատունեանցը հայոց հին բժշկարաններից հանել է մի քանի բժշկական նոր գիւտեր. 1. մաշաքայական այն է թոքախտական ցաւի դեղը, 2. երկարակեցութեան դեղ, որով մարդիկներին մինչև 160 տարի ապրեցնում է (փորձված է արդէն), 3. կանացի մի քանի դեղաւարին հիւանդութիւնների դեղ. 4. ժանտախտից բժշկելու դեղ. Յոյս ունենք, որ պարոնը նախքան իր արած գիւտերի գործադրութիւնը, իր հնարած դեղերը կը ներկայացնէ որ և իցէ բժշկական ընկերութեան քննութեանը:

Մեզ գրում են ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, չը նախելով, որ այս քաղաքի հասարակութիւնը ամեն ժամանակ առատածնուն է հանդիսացել բարեգործական նուիրատուութիւնների մէջ, բայց այս տարի փոքր ինչ ստանաւորութեամբ է վերաբերւում դէպի թիւրքաց Հայաստանի մեր սովատած լեղբայրների վիճակը: Աւելացնում են որ երկարատեւ ձմեռվայ և սաստիկ ցրտերի պատճառով, քաղաքի չըջակայ գիւղացիները իրանց անասունները բերում քաղաքը վաճառում են, որովհետեւ անասունների պաշարը սպառվել է և գետնը դուռնով ծածկված է:

ԱՂՔԻՆԻՍԱՊ, գիւղից մեզ գրում են, որ Ալէք. սանդրապովի բնակիչ պ. Պ. Կիրակոսեանը, չը նայելով, որ ինքը միջակ կարողութեան տէր մարդ է, բաւական բարեբարութիւններ է անում թէ անգղական հայոց աղքատ զարեցին և թէ եկեղեցուն:

Մեզ գրում են ԳԵՐԲԵՆԻՑ, որ փետրվարի 22-ին տեղւային սիրողների խումբը բարեգործական նպատակով ներկայացրեց քաղաքային կուրում Եւրոպի նշմովը և Եւս էլ քի մօցելութիւնն հանդուցեալ Տէր-Գրիգորեանցի վոդովիները: Զուտ աղբիւնը գոյացաւ 80 բուլբ: Տիկիները և օրիորդները շատ լաւ կատարեցին իրանց դերերը: Այլ և փետրվարի 28-ին առաջին անգամ կատարվեցաւ այդ քաղաքում հոգեհանգիստ վարդանանց նահատակների յիշատակին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԳՒՍՏՈՆԻ ՃԱՌԸ

Քանի որ անգլիական պարլամենտի անդամների ընտրութեան ժամանակ, ինչպէս հաղորդեց հեռագիրը, ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ, հետեալպէս անգլիական կառավարութիւնն էլ պահպանողականների ձեռքից պէտք է ազատութիւն կուսակցութեան ձեռքը անցնի, հետաքրքիր է Գլադստօնի ճառը, որ նա խօսեց ընտրութիւններից առաջ Մերթիլքնում:

«Բազմաթիւ նշաններից, ի միջի այլոց և այն ընդունելութիւնից, որ դուք ինձ արեք, ասում է Գլադստօն ընտրողներին, ես նկատում եմ, որ ազատամիտ կուսակցութեան գործը օրից օր առաջամտութիւն է անում: Բայց այդ ես հաւատացած եմ, որ յօրդ Դերբիին

այսուհետեւ ազատամիտ կուսակցութեան այն անդամներ լինում կարելի է համարել, որոնք ինձանից յետոյ են սկսել իրանց գործունէութիւնը և որոնք նոր սերունդին են պատկանում»:

Նախկին առաջին մինիստրը իր ճառի շարունակութեան մէջ եռանդով պախարակում է կառավարութեան վճիռը պարլամենտը արձակելու վերաբերութեամբ, քանի որ ինքը կառավարութիւնը ներկայացրել էր պարլամենտին օրէնքների բազմաթիւ նախագիծներ, որոնք կը մնան առանց քննութեան: Ընտրողական հոգսերը կը խանգարեն պարլամենտի անդամներին մասնակցել նիստերին: Այժմեան կառավարութիւնը պարլամենտին ներկայացրել է օրէնքի մի նախագիծ ընտրողական խաբէրայութիւնների վերաբերութեամբ: Այդպիսի մի օրէնքով, որ ընդունել էր նախկին կառավարութիւնը, նա աշխատում էր ոչնչացնել կաշառքի գլխաւոր միջոցներից մէկը, արգելելով ընտրողներին ընտրողների ճանապարհածախսը վճարել: Այժմ պահպանողական կառավարութիւնը, մի ուրիշ նախագիծ առաջարկելով, աշխատում է խափանել այդ արգելքը: Աւելորդ է քննել նոր նախագիծ անարդարութիւնները: Դա ձեռնտու է հարուստ ընտրողներին, որովհետեւ նոքա միջոցներ ունեն և կարող են իրանց ընտրողների ճանապարհածախսերը վճարել, մինչդեռ աղքատ ընտրողները այդ չեն կարող անել: Գլադստօն, մինիստրութեան այդ անարդարութիւնը ցոյց տալուց յետոյ, ասում է.

«Մինիստրութեան ընթացքը այդպէս է եղել: Յոյս ունեմ, որ այժմեան ընտրութիւնները կը բողոքեն նրա դէմ: Մենք պաշտպանում ենք հաւասարութիւնը և ազատութիւնը: Նրբի հիմնարկութիւնները մենք պաշտպանում ենք այն կուսակցութեան դէմ, որ իրան պահպանողական է անուանում, բայց որը ամեն բան քանդում է, փոխանակ պահպանելու: Մենք ցանկանում ենք պաշտպանել երկրի ազատութիւնը, կարգապահութիւնը, բարօրութիւնը և պատիւը, մենք ներքին հանգստութիւն և արտաքին խաղաղութիւն ենք ցանկանում: Այդ գործը իրաւացի է: Թող ամեն մէկը ձեզանից աշխատէ այդ գործը աջակցելու համար: Ինչ ինչ կը վերաբերի, ես հաւատացած եմ, որ ձեր աշխատանքները իմ և ձեր ցանկացած հետեւանքները կունենան»:

Ազատամիտ կուսակցութեան աջողութեանը վերջին ընտրութիւնների ժամանակ նրա պատեց և այն, որ Անգլիայում մեծ հեղեւնակութիւն ունեցող յօրդ Դերբի թողեց պահպանողական կուսակցութիւնը և ազատամիտների հետ միացաւ: Երազիրները հաւատացնում են, որ ընտրողներին ուղղված ազատամիտ կուսակցութեան շրջաբերականը օրդ Դերբիից է կազմված:

ԿԱՐԼ ՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Երազիրների մէջ հետեւեալ թղթակցութիւն է տպված Վիէնայից Կարլ Սանդրապովի կու մասին:

Մարտի 4-ին վախճանվեցաւ երիտասարդ չեխերի առաջնորդ Կարլ Սանդրապովի: Հանդուցեալը շատ լաւ կազմուածք ունէր և կարող էր երկար տարիներ ապրել, բայց աւստրիական կառավարութիւնը 1848 թ. յեղափոխութենից յետոյ Եւթ տարի շարունակ նրան սարսափելի բանտերի մէջ պահեց և այդ բանտարկութիւնը խանդարեց Սանդրապովի կու առողջութիւնը: Բանտի մէջ Սանդրապովի կրծքի հիւանդութիւն ստացաւ, որ և նրա մահուան պատճառը դարձաւ:

Թէպէտ աւստրիական բանտերը խանդարեցին Սանդրապովի Ֆիզիկական ոյժերը, բայց նոքա չը կարողացան փնտա տալ նրա բարոյական ոյժերին: 1848 թ. յեղափոխութիւնը, որին մասնակցեց Սանդրապովի, այն ժամանակ պա-

տահեցաւ, երբ հանդուցեալը աւարակ էր իր ուսումը համալսարանում և պարտաւորվում էր քննութիւն տալ: Հանդուցեալը դատապարտված էր 20 տարվայ բանտարկութեանը, բայց երբ հանգամանքները փոխվեցան և նա յուսադրվեցաւ շուտով ազատվել բանտի մէջ սկսեց իրաւաբանութիւնը սովորեցնել, ազատվելուց յետոյ փառաւոր քննութիւն տուեց և իրաւաբանութեան դոկտորի տիտղոս ստացաւ: Այդ ժամանակից սկսվեցաւ Սանդրապովի քաղաքական կեանքը, կամ աւելի լաւ է ասել քաղաքական մարտիրոսութիւնը:

Համոզմունքով կատարեալ ազատամիտ Սանդրապովի ատում էր կղերական կուսակցութիւնը, բայց չը կարողացաւ վերջ դնել իր յարաբերութիւններին այդ կուսակցութեան հետ, որովհետեւ այն ժամանակ չեխերի բոլոր առաջնորդները, մինչև անգամ Պալապկի չեխական ազգային գործի նեցուկը, կղերական կուսակցութեան էին համարում: Սանդրապովի նուիրված իր ազգային գործին, վախճանում էր ֆլասկ նրան և չէր կարում իր յարաբերութիւնները կղերականների հետ, թէպէտ կասկածում էր Պալապկու և միւս առաջնորդների հայացքների ճշգրտութիւնը: Վերջը Սանդրապովի այնու ամենայնիւ կազմեց երիտասարդ չեխերի կուսակցութիւն, որ թոյլ կերպով ընդգիմանում էր հին չեխերի կուսակցութեանը: Սանդրապովի սաստիկ ցանկանում էր դաշն կապել Բօհեմիայի գերմանացիների ազատամիտ մասի հետ, բայց վախճանով հին չեխերի յարձակմունքներից, չէր կարողանում իրագործել իր դիտաւորութիւնը: Վերջին ժամանակները այդ գերմանացիները սկսեցին նրան կասկածել նրա ռուսասիրութեան պատճառով:

Սանդրապովի ռուսասէր էր և գերմանացիները այդ բանը նրան չէին կարողանում ներել: Հանդուցեալը սխալ կերպով համոզված, որ Ռուսաստանի մէջ ուղղափառ դաւանութեանը պատկանող անձանց սլավոններ են համարում, ինքն էլ ուղղափառ դաւանութիւն ընդունեց: Նա կարծում էր, որ երկուստարդ չեխերից շատերը կը հետեւէին նրա օրինակին և այդ հանգամանքը Ռուսաստանի մէջ լաւ տպաւորութիւն կը գործի, իսկ Աւստրիային կը վախճնէ: Նա սխալվեցաւ այդ քայլը անելով. առաջինը՝ նրա օրինակին չեխերից ոչ ոք չը հետեւեց, երկրորդը՝ այդ վարմունքը հասկացող անձանց առաջ նրան ծիծաղելի դարձրեց, իսկ ամբողջ առաջ կասկածաւոր: Սանդրապովի հակառակորդները այդ հանգամանքից օգուտ քաղեցին, որ հասարակութեան առաջ ամբողջ նրա կուսակցութիւնը կասկածաւոր անեն:

Այդ սխալ քայլը անելուց յետոյ Սանդրապովի առանձնացաւ և այլ ևս անձնականապէս չէր խառնվում քաղաքականութեան մէջ, միայն դարձեալ իր խորհուրդներով օգնում էր իր կուսակցութեանը և նրան առաջնորդում: Սանդրապովի վերջին ժամանակները չափազանց զայրացած էր չեխերի առաջնորդների դէմ, որոնք չէին կարողանում առաջացնել և բարելաւել իրանց ազգային գործը:

Վերջին ժամանակները երիտասարդ չեխերը մի բողոք գրեցին եպիսկոպոսների շրջաբերականների դէմ: Այդ բողոքը Սանդրապովի բարեկամներից մէկը տարաւ նրան ստորագրելու: Թէ իր կուսակցութիւնը վճռել է այդպիսի քայլ անել: Նա ստորագրեց բողոքը և այնուհետեւ անգղայութեան մէջ ընկաւ:

ԼԵՒՈՆ XIII-ի ՔԱՐԼ ՍԱՆԴՐԱՊՈԼԻՑԻՆԸ

Պապ Լեոն XIII-ը վաղուց, գրեթէ իր ընտրվելու օրից հակված է դուրս գալ այն դժուար գրութեանից, որի մէջ գրել են նրան իր նախորդները, գրում է «Голосъ» լրագիրը իր առաջնորդող յօդուածներից մէկի մէջ:

Պիոս IX-ը, ինչպէս յայտնի է, պատերազմ յայտնեց ժամանակակից ոգուն և նրա վրա հիմնված եւրօպական քաղաքականութիւնը անիծեց: Վատիկանից նա անդադար ձեռնոցներ էր գցում թագաւորներին, կառավարութիւններին և ժողովուրդներին: Նա բողոքով չէր կամենում զինուորներ անել ժամանակի ընթացքին և պատմական անցքերի լօղկային: Նրա անփութիւն, մշտական պատասխանը «non possumus» (չենք կարող) էր: Իր հրատարակած անսխալականութեամբ զինուած նա հզօր էր իր անկարողութեամբ, հեռու էր մնում այն մարդիկներից, որոնք կառավարում էին բրիտանեայ աշխարհը և որի զուգար Պիոս IX իրան էր համարում:

Լեոն XIII չէր կարող և չը կամեցաւ գործին և անցքերին այդպէս վերաբերվել: Նա ցոյց տուեց, որ ինքը ոչ թէ երկիրներից զրկված աշխարհական թագաւոր է, այլ կաթօլիկ եկեղեցու գլուխ, որի պէտքերի համար ինքը պարտաւոր էր հոգալ: Պիոս IX-ի և Լեոն XIII-ի մէջ եղած այս զանազանութիւնը ուրիշ ձև տուեց նոր պայման գործունէութեանը: Հենց որ նա բարձրացաւ պապական գահը իսկոյն մտադրվեց իր նախորդի սկսած երկպառակութիւններին վերջ դնել, չը նայելով որ այդ գործը չափազանց դժուար էր: Նա իր սկսած գործը զգուշութեամբ տարաւ, որպէս զի իր ընթացքը խօսակցութիւնների աւարկայ չը դառնայ:

Լեոն XIII քաղաքականութեան ձևը շատ խելացի էր: Ամեն անգամ, երբ կաթօլիկ հոգեւորականութիւնը, մօտ անցեալի տպաւորութեան տակ, պատերազմ էր յայտնում աշխարհական իշխանութեանը, նա խորհուրդ էր տալիս հոգեւորականութեանը չափաւոր լինել և համաձայնվել կառավարութեան հետ, թէպէտ աւելացնում էր, որ ինքը սկզբունքով հաւանում է եպիսկոպոսների դէպի հաւատը ունեցած եռանդը:

Այժմ երեւում են այդ բուն իտալական քաղաքականութեան հետեւանքները: Բեղիական ազատամիտ մինիստրութեան և հոգեւորականութեան անհամաձայնութիւնները այս վերջինների զինուորով վերջացան: Ձերանայում հոգեւորականները հանրապետականների և միապետականների քաղաքական վէճին մասնակցելու դարաւերցին: Դոնեա ձերբի օրէնքի 7-դ յօդուածի ընտնութեան ժամանակ հոգեւորականները հասարակութիւնը չէին շփոթում:

Ինչպէս երեւում է այժմ Լեոն XIII աշխատում է վերջացնել գերմանական հոգեւորականութեան և Բերլինի կառավարութեան մէջ եղած վէճերը: Գերմանական կղերական «Germania» լրագրի տեղեկութիւնների համեմատ պապը Կեռնի եպիսկոպոսին մի նամակ է գրել, որով ցանկութիւն է յայտնում եկեղեցու և պետութեան մէջ ծագած վէճերը վերջացրած տեսնել և ասում է, թէ այդ նրա պատակի: Հասնելու համար սուրբ աթոռ պատրաստ է զինուորներ անել: Դրանից երեւում է, որ պապը աշխատում է գերմանական հոգեւորականների վէճերը հասցնել նոյն հետեւանքի, ինչին հասան բեղիական հոգեւորականութեան վէճերը: Եթէ պապը հասնի իր այդ նպատակին, նա կարող է պարծենալ, որ ինքը այնպիսի գործ աշողեցրեց, որի աջողութիւնը իր նախորդը անկարելի էր արել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի: «Правит. Вѣстн.» հաղորդում է հետեւեալ բիւլետներ թագուհու առողջութեան մասին: Թագուհու առողջութեան վատանալը, որ նկատվում էր վերջին երկու շաբաթների ընթացքում, դադարեցաւ: Անցեալ շաբաթ թագուհին աւելի լաւ էր զգում իրան, սրտի բաբախման վրա չէր զանգուարում: Թոյլութիւնը փոքրացաւ, քնելու հակումներ չեն նկատվում: Առհասարակ թագուհին աւելի ուժեղ էր: Շաբաթվայ ընթացքում հիւանդութեան բոլոր ձեւերից հաղթ թագուհուն աւելի էր անհանգիստ անում:

ՍՕՅԻՍ, 26 մարտի: Նոր մինիստրութիւնը կազմվեցաւ:

ԽՈՐԱԳԻՐ—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

